բերունին. "տապանաքարերի նկարները գեղեցկաքանդակ խաչեր են, իսկ երկրորդականը պատկերներ... արձանագրութիւնները վերաբերում են 1031, 1042 եւ այլ Հայկական Թուականներին: Բայց կան, ասում են 7—8 երորդ դարու տապանաքարեր: Առաջին Թուանշանները, ուրեմն արձանագրուած են նախ քան Շահաբասի գալուստը, որ արշաւեց Արարատեան դաշտի վրայ 1604 փրկչական Թուականին...:„ (Փորձ, 1877, Nr. I.)

Սակայն մենք, որ այցելեցինք Ջուղան 1884 Թուին՝ գտանք արձանագրութիւններ եւ ՋՂԹ, ՋՀԷ, ՋՀԲ (999, 977, 972) կամ 1550, 1528, 1523 Թուականների:

Ջուղայի բնակիչներն բոլորն էլ Հայ-Լուսաւորչական էին, բայց կային եւ կաթուղիկեայ Հայեր. դեռ այսօր կանգուն է մի փոքր կաթուղիկեայ եկեղեցի եւ այժմեան Ջուղայի բնակիչներն աւանդաբար ասում են, որ օտար կրօնաւորներ եւս բնակւում են եղել Ջուղայում եւ եղել են նոյնպէս օտարազգիներ, որովհետեւ գերեզմանատան մէջ մեզ պատահեց կարդալ եւ մի անգղիացի Լորդի տապանագիրը:

Հոչակաւոր Ամենափրկիչ եկեղեցին քաղաքից բաւականին հեռու է, մի ժայռի գլխին շինած:

Ջուղայից ոչ հեռի Երասխի վրայ երեւում են դեռ այն հոյակապ կամրջի մնացորդ աւերակները, որ հնում հոչակաւոր էր եւ կապում էր Արեւելքն Արեւմուտքի հետ: Այդ կամրջի